



ԲԱԶՄԱՎԷՊ

ՈՐԱԳԻՐ

ԺԵ ՏԱՐԻ, ԹԻՒ 19.

1857

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1.

քարոյական

ՆԿԱՐԱԳԻՐ

Մեծանձնութիւն :

Մեծանձնութիւնը այնպէս իրական բան մըն է, ինչպէս առողջութիւնը, և այլն : Մարդ մը՝ որ բախտին կ'իշխէ, և զօրաւոր միջոցներով բարձր վախճաններու կը հասնի, և որ իր գործունէութեամբ, համբերութեամբ և կամ խորին խորհուրդներով՝ կը նուաճէ ըզմարդիկ, դժուար է որ այս աստիճանի հանճարաւոր անձին վրայ չզգայ մէկը ազնուական իրականութիւն մը : Բայց սակայն չկայ անանկ զուտ բան մը, որով չզեղծանին մարդիկ առանց դժուարութեան :

Մեծանձնութիւնը՝ բարձր բնական ազդուամ մըն է, որ դիմել կու տայ զմարդ որ և իցէ տեսակ մեծ բաներու, բայց դէպ 'ի բարին կամ դէպ 'ի չարը

կը դարձնէ զինքը՝ իրեն կրիցը, լուսաւորութեանը, դաստիարակութեանը, բախտին, և այլն, համեմատ : Այժմ քը՝ հաւասար տեսնալով զինքը երկրիս վրայի եղած բարձրագոյն առարկաներուն հետ, երբեմն ամէն տեսակ ջանքով կամ հնարքներով ետեւէ կ'ըլլայ մարդկային բաները ընկճելու իրեն տակ, և երբեմն արհամարհելով զանոնք, ինքը ինքիրեն անոնց տակը կ'ընկճի՝ առանց նուաստանալու իր աս ընկճելովը, որովհետեւ իրեն սեփական մեծութեամբը լցուած՝ ծածուկ կը հանգչի անոնց վրայ, ուրախ ըլլալով որ ինքը իր անձին տէրն է : Ա՛հ, ինչպէս դեղնցիկ է մեծանձնութիւնը, երբոր առաքինութիւնն է առաջնորդ բոլոր իրեն

շարժմունքներուն . բայց ինչպէս վտանգաւոր է , երբոր կարգէ կանոնէ դուրս կ'ելլէ : Արեւակայէ մտքիդ մէջ զՍատիլինա իբրեւ մարդ մը , որ իր տոհմին ազնուականութեան բոլոր նախապաշարմունքները ոտքի տակ առած , աշխարհքս կերպարանաւորիս ընելու ու հռոմէական անունն անհետացնելու կը խորհի . և մտածէ որ աս յանդուգն հանձարը՝ հաճոյից մէջ ընկղմած կը սպառնայ աշխարհքիս , և անառակ ու աւազակ մարդիկներէ խումբ մը կը կազմէ , ուսկից կը սոսկան հռովմայ բանակներն ու իմաստութիւնը :

Այսպիսի բնաւորութեամբ անձ մը ինչ աստիճանի կրնար առաքինութեան սահմանն ընդարձակել , թէ որ բարւոյն հետեւէր . բայց ժամանակին դժբաղդ պարագաները զինքը անօրէնութեան մղեցին : Աստիլինա ի ծնէ հաճոյից եւ ռանդուն սէր մը ունէր , զոր օրինաց խստութիւնը կը դառնացընէր ու կը ճնշէր . իր շուայտութիւնն ու զեղխութիւնները կամաց կամաց եղեռնաւոր խորհրդոց մէջ ձգեցին զինքը . երբոր մերկ մնաց իր ինչքերէն , վատանուն , ու դիմացը արգելքներ դրուած , այնպիսի վիճակի մը մէջ տեսաւ ինքըզինքը , որ աւելի դիւրին էր կործանել զհասարակապետութիւնը՝ քան թէ կառավարել . և չկրնալով իր հայրենեայը դիւցազնն ըլլալ , անոր տիրապետելու սկըսաւ մտածել : Այսպէս մարդիկ շատ անգամ աղէտալի դիպուածներով և կամ իրենց վիճակին դիմքովը եղերանց մէջ կը սահին կ'իյնան . այսպէս իրենց առաքինութիւնը իրենց բախտէն կը կախուի : Ինչ կը պակսէր Աեսարու . բայց եթէ թագաւոր ծնած ըլլալ : Ազնուաբարոյ էր ինքը , վեհանձն , առատաձեռն , քաջասիրտ ու գթած . իրեն պէս յարմար ուրիշ անձ մը չէր

կրնար գտնուիլ աշխարհքս կառավարելու ու երջանկացընելու . թէ որ իր հանձարոյն հաւասար ըլլար իրեն բախտն ալ , անարատ կ'ըլլար իրեն կեանքը . բայց որովհետեւ ինքը ինքիրեն բռնի արքունական աթոռն ելաւ , իրաւունք սեպեցին արդարութեամբ բռնաւորաց կարգը դնելու զինքը :

Այլէ կ'իմացուի , որ մոլութիւններ կը գտնուին՝ մեծամեծ ձիրքերու հետ միացած , և հետեւաբար՝ կան մեծամեծ ձիրքեր , որ զատուած են առաքինութենէ : Յաւօք սրտի կը խոստովանիմ այս ճշմարտութիւնը . տխուր բան է՝ որ բարեսրտութիւնը միշտ ընկերակից չէ ուժի հետ , և թէ արդարութեան սէրը ամէն մարդու վրայ ու իրեն կենաց բովանդակ ընթացքին մէջ չզօրանար հարկաւորապէս քան զամէն ուրիշ սէր . և ոչ միայն մեծ մարդիկ ախտերու գերի կ'ըլլան , այլ նոյն իսկ առաքինիք ալ կը գէշնան և բարւոյն մէջ անհաստատ են : Այս սակայն ով որ առողջ է՝ առողջ է , ով որ զօրաւոր է՝ զօրաւոր է , և այլն : Առաքինութեան անհաւասար վիճակը , տկարութիւններն որ անոր կապակցեալ են , ախտերն որ ամենէն գեղեցիկ վարքերը կ'անպատուեն , մեր բնութեան՝ որուն վրայ յայտնապէս կը տեսնուի մեծութիւն ու նուաստութիւն միատեղ խառնուած՝ մեր բնութեան աս անբաժան թերութիւնքը , չեն աւրեր մարդուս կատարելութիւնները : Ինոնք , որոնք կ'ուզեն որ մարդիկ բոլորովին բարի ըլլան կամ բոլորովին չար , բացարձակապէս մեծ կամ նուաստ ըլլան , չեն ճանչնար մարդկային բնութիւնը : Իմէն բան խառնուրդ մըն է մարդկանց վրայ . իրենց ամէն բանը սահմանաւոր է . ու նոյն իսկ ախտերնին ալ չափ մը ունին :

ՎՕՎԵԱԲԿ

1 Հեղինակը հոստեղս , ինչպէս յօդուածին ուրիշ տեղերն ալ , քաղաքական առաքինութեան վրայօք կը խօսի , ու անոր համար պարագաներու վրայ կը կապէ զայն . ասպա թէ ոչ՝ բացարձակ առաքինութեան համար նոյն բանը չէր կրնար զուրյուիլ :